ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> ----հուլիս----------2025թ. N ՄՈ/ 637 -Ա

ք. Արմավիր

«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍՄԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Ռուզաննա Ասմարյանի 2025 թվականի հուլիսի 3-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Ասմարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2025 թվականի հուլիսի 8-ից 22-ը ներառյալ՝ 11 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ռուզաննա Ասմարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Կարինե Բարսեղյանին:
3. «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Բարսեղյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 8-ից 22-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Ռուզաննա Ասմարյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հուլիսի 23-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-07-04 14:24:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից